«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ՔՈԼԵՋԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌՅԱՆՑ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

23.03.2022թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջում իրականացվող հիմնարար բարեփոխումների շրջանակում իրականացվել են համալիր միջոցառումներ:

Կատարված աշխատանքների ընթացքը և արդյունավետությունը գնահատելու նպատակով, գործող «Ներքին և արտաքին շահակիցների հետադարձ կապի ապահովման քաղաքականության» համաձայն, ՈԱ պատասխանատուն իրականացրել է առցանց հարցումներ ուսանողների շրջանում:

1. **Հետազոտության նպատակը:** Ուսումնասիրել և վերլուծել Քոլեջի շրջանավարտների կողմից կրթության որակի ապահովման արդյունավետության վերաբերյալ ուժեղ և թույլ կողմերը:
2. **Հետազոտության խնդիրները՝**

- ❖ Բացահայտել դասավանդման որակի արդյունավետության մակարդակը:
- ❖ Ստեղծել տվյալների հենք Քոլեջում ուսումնական գործընթացի գնահատման համար:
- ❖ Հարցումների արդյունքների հիման վրա բացահայտել խնդիրները և գտնել դրանց լուծման ուղիները:

3. **Շրջանավարտների հարցման գործընթացի կազմակերպումը**

ՈԱ պատասխանատուի կողմից, համաձայն գործող կարգի՝ 25.01.2022-21.03.2022 թթ. կազմակերպվել է առցանց հարցումներ Քոլեջի շրջանավարտների շրջանում:

Հարցմանը մասնակցել են 42 շրջանավարտ, այսինքն 3 տարվա ընդհանուր շրջանավարտների թվի մոտ 52 %-ը, ովքեր պատասխանել հարցաթերթիկում ներառված հարցերին (Հավելված 1):

Հարցաթերթը պարունակում է 13 հարց:

4. **Հետազոտության ընտրանքի նկարագրություն**

Շրջանավարտների առցանց հարցումներն անցկացվել են **Google Forms** ծրագրով:

Շրջանավարտների ակտիվ մասնակցությունն ապահովվել է Ուսումնական մասը և Պրակիկայի և կարիերայի բաժնի պատասխանատուն՝ տարածելով հղումը նրանց ֆեյսբուքյան անձնական էջերում, հորդորելով մասնակցել և պատասխանել անաչառ և օբյեկտիվ:

5.Հարցման արդյունքների ամփոփում

Հարցումների արդյունքներն ամփոփվել են ՈԱ պատասխանատուի կողմից, ներկայացվել տնօրենի տեղակալին և ամբիոններին, ապա նաև զեկուցվել Քոլեջի Տնօրինական խորհրդի նիստին:

Հավելված 1

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Նշեք Ձեր մասնագիտությունը

Գծանկար № 1



Մեր կողմից կազմակերպած հարցմանը ընդհանուր առմամբ մասնակցել են Քոլեջի 42 շրջանավարտ: Մասնակիցներից մեծամասնությունը 68%-ը «Դեղագործություն» մասնագետներն են, «Ատամնատեխնիկական գործ» մասնագետները 32%-ը, իսկ «Քույրական գործ» և «Մանկաբարձական գործ» մասնագետ շրջանավարտները ընդհանրապես չեն մասնակցել հարցմանը:

Ասպիսով, Քոլեջի շրջանավարտներից առավել ակտիվ են եղել «Դեղագործություն» մասնագետները:

2. Նշեք ձեր տարիքը

Գծանկար № 2



Ինչպես երևում է գծապատկերում, հարցվողների 100%-ը 18-25 տարեկան շրջանավարտներ են եղել: Հաշվի առնելով տարիքային սահմանը, կարելի է փաստել, որ հարցմանը մասնակցել են վերջին երեք տարվա Քոլեջի շրջանավարտները:

3. Շրջանավարտների որակական հատկանիշները

Գծանկար № 3

Տվյալները ներկայացված են մասնակիցների թվերով



4. Քոլեջն ավարտելուց անմիջապես հետո ինչով եք զբաղվել

Գծանկար № 4

Տվյալները ներկայացված են մասնակիցների թվերով



Ինչպես երևում է գծանկար 4-ում, հարցվողների 24.5%-ը Քոլեջն ավարտելուց անմիջապես հետո, ուսումն շարունակել են բուհերում: Հարցվողների 45%-ը անցել են աշխատանքի, ըստ մեզ մոտ եղած տեղեկատվության այդ 45%-ը հիմնականում դեղագործներն են: Ուսումն ու աշխատանքը համատեղել են՝ 24.5%-ը, դա ևս լավ ցուցանիշ է: Այս տվյալները վկայում են այն մասին, որ քոլեջում ստացած մասնագիտական

կրթությունը բավարարում է Քոլեջի շրջանավարտներին կամ ուսումնառությունը շարունակել բուհերում, կամ էլ անմիջապես անցնել աշխատանքի:

5. **Աշխատանքային գործունեությունը**

Գծանկար № 5

Տվյալները ներկայացված են մասնակիցների թվերով և տոկոսով



Ինչպես երևում է գծանկար 5-ում, «Աշխատանքային գործունեության» հարցին, բոլոր հարցվողները նշել են, որ աշխատում են իրենց մասնագիտությամբ: Այստեղից կարելի է եզրակացնել, որ իրոք Քոլեջում ստացած մասնագիտական գիտելիքները բավարարել են ուսումնառողներին իրենց մասնագիտությամբ աշխատելու համար:

6. **Աշխատանքի ընդունվելիս հանդիպել ե՞ք խոչընդոտների, եթե այո, ապա նշեք ինչպիսի խոչընդոտներ են եղել::**

Գծանկար № 6



Հարցվողների գերակշիռ մասը 94%-ը աշխատանքի ընդունվելիս ընդհանրապես որևէ խոչընդոտների չի հանդիպել: Այսինքն, գործատուն ստուգելով մասնագիտական գիտելիքները, կարողությունները և հմտությունները, առանց որևէ խնդրի ընդունել է աշխատանքի: Հարցվողների միայն 6%-ն է մասամբ խոչընդոտների հանդիպել, որը կարելի է համարել նորմալ, քանի որ ոչ բոլոր շրջանավարտներն են ցուցաբերել բարձր առաջադիմություն:

7. **Ինչ եք կարծում Քոլեջում ստացած կրթությունը ձեզ բավարար պատրաստված է դարձրել աշխատանքային արդյունավետ գործունեություն սկսելու համար:**

Գծանկար №



Հաջորդ հարցադրումը նպատակաուղված էր պարզելու Քոլեջում ստացած կրթությունը բավարար պատրաստված է դարձրել աշխատանքային արդյունավետ գործունեություն սկսելու համար: Հարցվողների 93%-ը նշել է «Լիովին» տարբերակը, այսինքն, Քոլեջում ստավցած մանսգիտական գիտելիքները լիովին բավարար են եղել աշխատանքային գործունեության ընթացքում: Հարցվողների միայն 7%-ը նշել է «Որոշ չափով բավարար» տարբերակը: Այսինքն, կարելի է հետևություն անել, որ Քոլեջում ընդհանուր առմամբ իրականացվում է արդյունավետ ուսումնական գործընթաց, Քոլեջն ապահովված է բարձրակարգ մասնագիտական անձնակազմով և նյութատեխնիկական ռեսուրսները ապահովում են նվազագույն պահանջները:

8. **Եթե հնարավորություն ունենայիք, ապա ինչը կփոխեիք Ձեր Քոլեջիում (նշել մինչև 5 տարբերակ):**

Գծանկար № 8



Գծանկար 8-ում ներկայացված բաց հարցին, հարցվողները հնարավորություն են ունեցել նշելու մինչև 5 տարբերակ:

Այսպիսով, հարցվողների գերակշիռ մասը 88%-ը նշել է «Կուժեղացնեի Քոլեջի գովազդը» և 81%-ը՝ «Կհարստացնեի համակարգչային բազան»: Այսինքն Քոլեջի ղեկավարությունը հիմք ընդունելով շրջանավարտների գերակշիռ մասի կարծիքները պետք է արդիականացնի և հարստացնի համակարգչային բազան և Քոլեջի վերաբերյալ տեղեկատվական գովազդը:

Ինչ վերաբերում է 75%-ի առաջարկը «Կբարձրացնեի սովորողներին հետազոտական աշխատանքում ներգրավումը» տարբերակին, ապա Քոլեջի մասնագիտական ամբիոնները պետք է վերանայեն իրենց կողմից առաջարկվող հետազոտական աշխատանքները:

Հարցվողների 56%-ը առաջարկում է ավելացնել մասնագիտական առարկաների ժամերը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործող ՊԿՉ-ով հստակ սահմանված են առարկայական դասընթացների ժամերը, այդ հարցը մի քիչ խնդրահարույց է: Այնուհանդերձ հնարավոր է որոշակի վերանայում կատարել:

Հարցվողների կողմից ներկայացված մյուս տարբերակները ամբողջովին ներառված են որպես առաջնային խնդիր, Քոլեջի 2019-2024թթ. ՌԶԾ-ում:

9. Եթե հնարավորություն ունենայիք ուսումը նորից սկսելու, Դուք կընտրեի՞ք նույն մասնագիտությունը և նույն կրթական հաստատությունը

Գծանկար № 12



Հարցման վերջին, եզրափակիչ մասում ներառված էր «Եթե հնարավորություն ունենայիք ուսումը նորից սկսելու, Դուք կընտրեի՞ք նույն մասնագիտությունը և նույն կրթական հաստատությունը» հարցադրումը, որի պատասխանը անչափ գոհացուցիչ և պարտավորեցնող է Քոլեջի ամբողջ անձնակազմի համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով կատարված հարցման արդյունքները, կարելի է եզրահանգել, որ Քոլեջի շրջանավարտները ընդհանուր առմամբ գոհ են Քոլեջում ստացած իրենց մասնագիտական գիտելիքներից և ձեռքբերված հմտություններից:

Առկա պատասխանները, առաջարկները և ցանկությունները անպայման հաշվի կառնվեն Քոլեջի ղեկավարության կողմից և կմշակվեն բարելավման համալիր միջոցառումներ:

ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ընդունելով հարցման արդյունքների վերլուծությունը և ուղղորդվելով Քոլեջում կիրառվող ՊԻՍԲ շրջափուլի դրույթները, Քոլեջի 2019-2024թթ. Ռազմավարական զարգացման ծրագրի գործողությունների պլան-ժամանակացույցով պայմանավորված, պալանավորվել են համապատասխան գործողություններ:

Կատարված աշխատանքների արդյունավետությունը հարցման միջոցով ստուգվել և/կամ գնահատվել է: Գնահատման տվյալների ամփոփումը կկատարվի Տնօրինական խորհրդի նիստում: Բարելավմանն ուղված միջոցառումների կատարման համար կկայացվի է համապատասխան որոշում:

Հաշվի առնելով այս ամենը որպես բարելավում առաջարկվում է.

1. Արդիականացնել Քոլեջի տեխնիկական միջոցները:
2. Հնձնարարել պրակտիկայի և կարիերայի բաժնի պատասխանատունին բարելավել կարիերային նպաստող ընթացակարգերի վերաբերյալ տեղեկացվածության աշխատանքները:
3. Բարելավել մասնագիտական կաբինետները և լաբորատորիաները (ատամնատեխնիկական, դեղագործական և քույրական):
4. Վերանայել Քոլեջի վերաբերյալ տեղեկատվության տարածման մեխանիզմները:
5. Դասավանդման մեթոդաբանության արդիականացում, ավելի շատ ցուցադրական նյութեր, ուսանողների կողմից ինքնուրույն աշխատանքների ավելացում և այլն:
6. Վերանայել հետազոտական աշխատանքների կազմակերպման մեխանիզմները:
7. Կառավարման մարմիններում ներգրավված ուսանողներին հանձնարարել ավելի ակտիվ գործունեություն իրականացնել:

ՈԱ պատասխանատու՝ _____ Ա.Գ.Գյոզալյան

26.01.2022թ.